

«Վավերացնում են»  
Հայաստանի Հանրապետության  
Նախագահ Ռ. Քոչարյան  
1 փետրվարի 2006 թ.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 դեկտեմբերի 2005 թվականի N 2328-Ն

#### ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԻ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԵՎ (ԿԱՄ) ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ ՎԹԱՐՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՊԼԱՆԸ (ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՎԹԱՐԱՅԻՆ ՊԼԱՆ) ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» ու «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետությունում միջուկային և ճառագայթային վթարների հակազդման պատասխանատվության մասին» N 1953-Ն որոշումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է**

1. Հաստատել՝

- 1) Հայկական ատոմային էլեկտրակայանի միջուկային և (կամ) ճառագայթային վթարների դեպքում բնակչության պաշտպանության ազգային պլանը (Հայկական ատոմային էլեկտրակայանի արտաքին վթարային պլանը)՝ համաձայն N 1 հավելվածի.
- 2) Հայկական ատոմային էլեկտրակայանի վթարի դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումների քարտեզը՝ համաձայն N 2 հավելվածի.
- 3) Հայկական ատոմային էլեկտրակայանի վթարի դեպքում կապի կազմակերպման սխեման՝ համաձայն N 3 հավելվածի.
- 4) նախահարձակ պաշտպանական միջոցառումների իրականացման և շտապ պաշտպանական միջոցառումների պլանավորման գոտիների բնակչության իրային ապահովման միջոցների հաշվարկը՝ ըստ բնակավայրերի՝ համաձայն N 4 հավելվածի.
- 5) նախահարձակ պաշտպանական միջոցառումների իրականացման և շտապ պաշտպանական միջոցառումների պլանավորման գոտիների բնակչության տարահանման տրանսպորտային միջոցների և վառելիքաքսուքային նյութերի հաշվարկը՝ ըստ բնակավայրերի՝ համաձայն N 5 հավելվածի.
- 6) Հայկական ատոմային էլեկտրակայանում տեղի ունեցած ճառագայթային վթարի մասին դասակարգված տեղեկատվություն ստանալու

համար օգտագործվող ծածկագրերը՝ համաձայն N 6 հավելվածի.

7) Հայկական ատոմային էլեկտրակայանի վթարի դեպքում ազդարարման կազմակերպման սխեման՝ համաձայն N 7 հավելվածի.

8) Հայկական ատոմային էլեկտրակայանի վթարի դեպքում նախնական ազդարարման փաստաթղթի ձևը՝ համաձայն N 8 հավելվածի.

9) Հայկական ատոմային էլեկտրակայանի վթարի դեպքում հետագա հաղորդագրությունների փաստաթղթի ձևը՝ համաձայն N 9 հավելվածի.

10) Բնակչության պաշտպանության պլանավորման համակարգի կառուցվածքային սխեման՝ համաձայն N 10 հավելվածի.

11) Հայկական ատոմային էլեկտրակայանի վթարի դեպքում բնակչության տարահանման միջոցառումների կառավարման սխեման՝ համաձայն N 11 հավելվածի.

12) Հայկական ատոմային էլեկտրակայանի ընդհանուր վթարի դեպքում շտապ պաշտպանական միջոցառումների իրականացման մասին որոշումների ընդունման չափանիշները՝ համաձայն N 12 հավելվածի.

13) նախահարձակ պաշտպանական միջոցառումների իրականացման և շտապ պաշտպանական միջոցառումների պլանավորման գոտիների բնակչության վահանաձև գեղձի արգելափակման հաշվարկը՝ համաձայն N 13 հավելվածի.

14) նախահարձակ պաշտպանական միջոցառումների իրականացման և շտապ պաշտպանական միջոցառումների պլանավորման գոտիներում բնակչության անհատական պաշտպանության միջոցներով ապահովման մասին հաշվարկը՝ համաձայն N 14 հավելվածի.

15) նախահարձակ պաշտպանական միջոցառումների իրականացման և շտապ պաշտպանական միջոցառումների պլանավորման գոտիներում բնակչության պատսպարման մասին հաշվարկը՝ համաձայն N 15 հավելվածի.

16) նախահարձակ պաշտպանական միջոցառումների իրականացման և շտապ պաշտպանական միջոցառումների պլանավորման գոտիներից բնակչության տարահանման միջանկյալ կետերի հաշվարկը՝ համաձայն N 16 հավելվածի.

17) նախահարձակ պաշտպանական միջոցառումների իրականացման և շտապ պաշտպանական միջոցառումների պլանավորման գոտիներում հակահրդեհային ուժերի և միջոցների հաշվարկը՝ համաձայն N 17 հավելվածի.

18) նախահարձակ պաշտպանական միջոցառումների իրականացման և շտապ պաշտպանական միջոցառումների պլանավորման գոտիներում ոստիկանության և բժշկական հակազդման ուժերի և միջոցների հաշվարկը՝ համաձայն N 18 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարին՝ անհրաժեշտության դեպքում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել սույն որոշման համապատասխան հավելվածներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ:

**(2-րդ կետը փոփ. 21.08.08 N 1042-Ն)**

3. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին՝ 6-ամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության պետական ռեզերվների գործակալություն ներկայացնել ֆինանսական առաջարկ Հայկական ատոմային էլեկտրակայանի միջուկային և (կամ) ճառագայթային վթարների դեպքում նախահարձակ պաշտպանական միջոցառումների և շտապ պաշտպանական միջոցառումների պլանավորման գոտիներում գտնվող

համայնքների բնակչությանն անհրաժեշտ թվով անհատական պաշտպանական միջոցներ ձեռք բերելու վերաբերյալ:

**(3-րդ կետը փոփ. 21.08.08 N 1042-Ն)**

4. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարին՝ 6-ամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության պետական ռեզերվների գործակալություն ներկայացնել ֆինանսական առաջարկ Հայկական ատոմային էլեկտրակայանի միջուկային և (կամ) ճառագայթային վթարների դեպքում նախահարձակ պաշտպանական միջոցառումների իրականացման և շտապ պաշտպանական միջոցառումների պլանավորման գոտիներում գտնվող համայնքների բնակչությանը կայուն յոդի պատրաստուկների անհրաժեշտ քանակությամբ պաշար ձեռք բերելու վերաբերյալ:

**(4-րդ կետը փոփ. 21.08.08 N 1042-Ն)**

5. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարին՝ 6-ամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության պետական ռեզերվների գործակալություն ներկայացնել ֆինանսական առաջարկ Հայկական ատոմային էլեկտրակայանի միջուկային և (կամ) ճառագայթային վթարների դեպքում նախահարձակ պաշտպանական միջոցառումների իրականացման և շտապ պաշտպանական միջոցառումների պլանավորման գոտիներում գտնվող համայնքների բնակչությանը սննդամթերքի և առաջին անհրաժեշտության այլ ապրանքների անհրաժեշտ քանակություն ձեռք բերելու վերաբերյալ:

**(5-րդ կետը փոփ. 21.08.08 N 1042-Ն, 22.07.10 N 926-Ն)**

6. Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարին՝ 6-ամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության պետական ռեզերվների գործակալություն ներկայացնել ֆինանսական առաջարկ Հայկական ատոմային էլեկտրակայանի միջուկային և (կամ) ճառագայթային վթարների դեպքում տարահանման միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ տրանսպորտային միջոցների համար վառելիքաքսուլային նյութեր ձեռք բերելու վերաբերյալ:

**(6-րդ կետը փոփ. 21.08.08 N 1042-Ն)**

7. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարին՝ ըստ սույն որոշման 8-րդ կետում նշված մարմինների ներկայացրած ֆինանսական առաջարկների՝ ստեղծել համապատասխան պաշարներ և իրականացնել ապահովումը:

**(7-րդ կետը փոփ. 21.08.08 N 1042-Ն)**

8. Հանձնարարել սույն որոշմամբ հաստատված պլանում ներգրավված բոլոր պետական կառավարման մարմինների ղեկավարներին և առաջարկել տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների ղեկավարներին 6-ամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության պետական ռեզերվների գործակալություն ներկայացնել ֆինանսական առաջարկներ ներգրավված ուժերի համակողմանի ապահովման համար միջոցներ ձեռք բերելու վերաբերյալ:

**(8-րդ կետը փոփ. 21.08.08 N 1042-Ն)**

**(Որոշումը խմբ. 17.01.08 N 194-Ն)**

## Ա Ձ Գ Ա Յ Ի Ն Պ Լ Ա Ն

### ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐՈԿԱՅԱՆԻ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԵՎ (ԿԱՄ) ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ ՎԹԱՐՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ (ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐՈԿԱՅԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՎԹԱՐԱՅԻՆ ՊԼԱՆ)

#### I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն պլանով սահմանվում են «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ ՀԱԷԿ) միջուկային և (կամ) ճառագայթային վթարների դեպքում իոնացնող ճառագայթման վնասակար ազդեցությունից բնակչության պաշտպանության միջոցառումների և դրանց ապահովմանն ուղղված պահանջները:

2. Սույն պլանում օգտագործված հասկացություններն են՝

1) *նախահարձակ պաշտպանական միջոցառումների իրականացման գոտի (այսուհետ՝ ՆՊՄԻ գոտի)*՝ ՀԱԷԿ-ին հարակից 5 կմ շառավղով տարածք, ուր պլանավորվում են օբյեկտից անմիջականորեն ստացված ահազանգման հիման վրա (ըստ օբյեկտում վթարային իրավիճակի համապատասխան դասի)՝ մինչև ռադիոակտիվ արտանետումը կամ արտանետման սկզբնական փուլում անհապաղ իրականացվելիք գործողություններ.

2) *շտապ պաշտպանական միջոցառումների պլանավորման գոտի (այսուհետ՝ ՇՊՄՊ գոտի)*՝ ՀԱԷԿ-ին հարակից 5-10 կմ շառավղով տարածք, ուր պլանավորվում են միջուկային և ճառագայթային անվտանգության պետական կարգավորող մարմնի (այսուհետ՝ կարգավորող մարմին) առաջարկությունների հիման վրա վթարային հակազդման ազգային համակարգողի կողմից տրված հրահանգներով իրականացվելիք գործողություններ.

3) *երկարաժամկետ պաշտպանական գործողությունների պլանավորման գոտի (այսուհետ՝ ԵՊԳՊ գոտի)*՝ ՀԱԷԿ-ին հարակից տարածք, ուր պլանավորվում են տեղական արտադրության սննդամթերքի և խմելու ջրի օգտագործման սահմանափակումներից ելնող, ինչպես նաև բնակչության քրոնիկ ճառագայթահարումը բացառող միջոցառումներ, որոնք կիրականացվեն վթարային հակազդման ազգային համակարգողի հրահանգների համաձայն՝ կարգավորող մարմնի առաջարկությունների հիման վրա:

3. Պլանում ներգրավվում են՝

1) Հայաստանի Հանրապետության հետևյալ պետական կառավարման մարմինները՝

ա. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն (այսուհետ՝ ՀՀ ԱԻՆ ՀՓԾ),

բ. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն,

գ. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն,

դ. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն,

- ե. Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարություն,
- զ. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն,
- է. Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն,
- ը. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն,
- թ. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն,
- ժ. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարություն,
- ժա. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն,
- ժբ. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն,
- ժգ. **(պարբերությունն ուժը կորցրել է 22.07.10 N 926- Ն)**

ժգ.1. Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարություն,

ժդ. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե (այսուհետ՝ ՀՀ ՏԿՆ ՋՏՊԿ),

- ժե. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն,
- ժզ. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե,
- ժէ. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն,
- ժը. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն,
- ժթ. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարան,
- ի. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարան,
- իա. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարան,
- իբ. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարան,
- իգ. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության պետական կոմիտե,
- իդ. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերություն,
- իե. «Հայաստանի հանրային ռադիո» փակ բաժնետիրական ընկերություն,
- իզ. **(պարբերությունն ուժը կորցրել է 22.07.10 N 926- Ն)**

2) Հայաստանի Հանրապետության Արմավիրի, Արագածոտնի, Շիրակի և Կոտայքի մարզերի հետևյալ տեղական ինքնակառավարման մարմինները՝

- ա. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիրի քաղաքապետարան,
- բ. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի քաղաքապետարան,
- գ. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատի (Էջմիածնի) քաղաքապետարան,
- դ. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակի քաղաքապետարան,
- ե. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալինի քաղաքապետարան,

զ. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետարան,  
է. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդանի քաղաքապետարան,  
ը. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Եղվարդի քաղաքապետարան,  
թ. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույսի գյուղապետարան,  
ժ. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ակնալճի գյուղապետարան,  
ժա. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մայիսյանի գյուղապետարան,  
ժբ. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ֆերիկի գյուղապետարան,  
ժգ. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշենի գյուղապետարան,  
ժդ. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատան գյուղապետարան,  
ժե. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արագածի գյուղապետարան,  
ժզ. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտաշարի գյուղապետարան,  
ժէ. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկի գյուղապետարան,  
ժը. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Եղեգնուտի գյուղապետարան,  
ժթ. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Զարթոնքի գյուղապետարան,  
ի. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնքի գյուղապետարան,  
իա. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկալանջի գյուղապետարան,  
իբ. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծիածանի գյուղապետարան,  
իգ. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հովտամեջի գյուղապետարան,  
իդ. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայթաղի գյուղապետարան,  
իե. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաշատի գյուղապետարան,  
իզ. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նորավանի գյուղապետարան,  
իէ. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գեղակերտի գյուղապետարան,  
իր. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տարոնիկի գյուղապետարան,  
իթ. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Դոդսի գյուղապետարան,  
լ. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի գյուղապետարան,  
լա. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Զրառատի գյուղապետարան,  
լբ. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիրի գյուղապետարան,  
լգ. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Երասխահունի գյուղապետարան,  
լդ. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտի գյուղապետարան,  
լե. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայի գյուղապետարան,  
լզ. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստանի գյուղապետարան,

- լէ. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատի գյուղապետարան,
- լը. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Սարդարապատի գյուղապետարան,
- լթ. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատի գյուղապետարան,
- խ. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խանջյանի գյուղապետարան,
- խա. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյանի գյուղապետարան,
- խբ. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Դաշտի գյուղապետարան,
- խգ. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ամբերդի գյուղապետարան,
- խդ. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նորապատի գյուղապետարան,
- խե. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Նոր Ամանոսի գյուղապետարան,
- խզ. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Արագածոտնի գյուղապետարան,
- խէ. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Նոր Եղեսիայի գյուղապետարան,
- խը. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ոսկեվազի գյուղապետարան,
- խթ. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Օշականի գյուղապետարան,
- ծ. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Կոշի գյուղապետարան,
- ծա. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Արուճի գյուղապետարան,
- ծբ. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ուջանի գյուղապետարան.

3) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի տարածքում գտնվող հետևյալ կազմակերպությունները՝

ա. «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերություն,

բ. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության Արմավիրի մարզային փրկարարական վարչություն,

գ. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն,

դ. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության օրթոպեդիայի, այրվածքների և ճառագայթաբանության կենտրոն,

ե. «ԱրմենԹել» փակ բաժնետիրական ընկերություն,

զ. «ԱրմենԹել» փակ բաժնետիրական ընկերության Կենտրոնական տարածքային կենտրոնի Էջմիածին-Արմավիր-Բաղրամյան ուղղություն,

է. «Հարավ-Կովկասյան երկաթուղիներ» փակ բաժնետիրական ընկերության «Արմավիրի կայարան»,

ը. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մեծամորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն,

թ. Հայպետհիդրոմետի Արմավիրի օդերևութաբանական կայան:

**(3-րդ կետը խմբ.08.01.09 N 34- Ն, փոփ. 21.08.08 N 1042- Ն, փոփ., լրաց, խմբ. 22.07.10 N 926- Ն)**

4. Պլանի իրավական հիմքերն են հետևյալ միջազգային պայմանագրերը, Հայաստանի Հանրապետության օրենքները, Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումները և այլ իրավական ակտեր`

1) «Միջուկային անվտանգության մասին» կոնվենցիա (վավերացվել է 24.09.1997 թ.).

2) «Միջուկային վթարի մասին օպերատիվ տեղեկացման մասին» կոնվենցիա (վավերացվել է 22.06.1993 թ.).

3) «Միջուկային վթարի կամ ճառագայթային վթարային իրավիճակի դեպքում օգնության մասին» կոնվենցիա (վավերացվել է 22.06.1993 թ.).

4) «Բնական և տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակների մասին տեղեկատվության փոխանակման, դրանց հետևանքների վերացման ժամանակ տեղեկատվական փոխգործակցության և տուժած բնակչությանն օգնություն ցույց տալու մասին» համաձայնագիր (վավերացվել է 19.08.2004 թ.).

5) «Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք.

6) «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք.

7) «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք.

8) «Հայաստանի փրկարար ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք.

9) «Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք.

9.1) «Հրդեհային անվտանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք

10) «Պետական նյութական պահուստի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք.

11) «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք.

12) «Հիդրոոդերևութաբանական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք.

13) Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք.

14) Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի դեկտեմբերի 13-ի «Վտանգավոր տարածքից բնակչության տարահանման կարգը հաստատելու մասին» N 746 որոշում.

15) Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի սեպտեմբերի 28-ի «Բնակչության պատսպարման կարգը հաստատելու մասին» N 592 որոշում.

16) Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 25-ի «Բնակչությանն անհատական պաշտպանության միջոցներով ապահովելու կարգը հաստատելու մասին» N 679 որոշում.

17) Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հոկտեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում արտակարգ իրավիճակների առաջացման մասին տեղեկատվության ստացման և ազդարարման կարգը հաստատելու մասին» N 1304-Ն որոշում.

18) Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի նոյեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում արտակարգ իրավիճակների առաջացման մասին բնակչության ազդարարման կարգը հաստատելու մասին» N 1925-Ն որոշում.

19) Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հոկտեմբերի 29-ի «Կառավարման մարմինների և բնակչության



իրագրված կարգը սահմանելու մասին» N 1494-Ն որոշում.

20) Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի մայիսի 19-ի «Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության «Հայաստանի փրկարար ծառայության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N 634-Ն որոշում.

20.1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի մայիսի 15-ի «Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N 531-Ն որոշում.

21) Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հուլիսի 29-ի «Ճառագայթային, քիմիական ու մանրէաբանական իրավիճակի մշտական հսկողության համակարգի ստեղծման և գործունեության ապահովման կարգը սահմանելու մասին» N 1064-Ն որոշում.

22) Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հուլիսի 17-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի կանոնադրությունը, աշխատակազմի կառուցվածքը, գույքի կազմն ու չափը հաստատելու մասին» N 866-Ն որոշումը.

22.1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 18-ի «Ճառագայթային անվտանգության նորմերը հաստատելու մասին» N 1219-Ն որոշում.

22.2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 18-ի «Ճառագայթային անվտանգության կանոնները հաստատելու մասին» N 1489-Ն որոշում.

23) Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի «Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և բնակչության ուսուցման կարգը սահմանելու մասին» N 134-Ն որոշում.

24) Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի «Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության պետական ռեզերվների գործակալության կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու մասին» N 1337-Ն որոշում.

25) Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 18-ի «Հիդրոօդերևութաբանական երևույթների և պրոցեսների մասին հույժ շտապ և ընդհանուր նշանակության տեղեկատվության ցանկը սահմանելու մասին» N 349-Ն որոշում.

26) «Միջուկային ու ճառագայթային վթարների հակազդման պատրաստվածության և իրականացման պատրաստվածությունը: Պահանջներ (Անվտանգության ստանդարտ GS-R-2):

*(4-րդ կետը խմբ.08.01.09 N 34-Ն, խմբ., փոփ. 21.08.08 N 1042-Ն, լրաց, 22.07.10 N 926-Ն)*

5. Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների կողմից, որպես սույն պլանից բխող

հավելվածներ, կազմվում են՝

- 1) ՀԱԷԿ-ի միջուկային և (կամ) ճառագայթային վթարի դեպքում հասարակական կարգի պահպանության և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնակազմի պաշտպանության պլանը.
- 2) ՀԱԷԿ-ի միջուկային և (կամ) ճառագայթային վթարի դեպքում բժշկական ապահովման և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության անձնակազմի պաշտպանության պլանը.
- 3) ՀԱԷԿ-ի միջուկային և (կամ) ճառագայթային վթարի դեպքում կապի և տրանսպորտային միջոցներով ապահովման ու Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության անձնակազմի պաշտպանության պլանը.
- 4) ՀԱԷԿ-ի միջուկային և (կամ) ճառագայթային վթարի դեպքում Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության գործողությունների պլանը.
- 5) ՀԱԷԿ-ի միջուկային և (կամ) ճառագայթային վթարի դեպքում անասնաբուժական ու բուսասանիտարական միջոցառումների իրականացման և Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության անձնակազմի պաշտպանության պլանը.
- 6) ՀԱԷԿ-ի միջուկային և (կամ) ճառագայթային վթարի դեպքում հանրակրթական դպրոցների և այլ ուսումնական հաստատությունների անձնակազմերի պաշտպանության ու Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության անձնակազմի պաշտպանության պլանը.
- 7) ՀԱԷԿ-ի միջուկային և (կամ) ճառագայթային վթարի դեպքում պաշտպանական կառույցների, նկուղային հարկերի հարմարեցման ու օգտագործման և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության անձնակազմի պաշտպանության պլանը.
- 8) ՀԱԷԿ-ի միջուկային և (կամ) ճառագայթային վթարի դեպքում էներգետիկ ապահովման և Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության անձնակազմի պաշտպանության պլանը.
- 9) ՀԱԷԿ-ի միջուկային և (կամ) ճառագայթային վթարի դեպքում մարդկանց սանիտարական մշակման ու տեխնիկայի ապաստիվացման կազմակերպման և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության անձնակազմի պաշտպանության պլանը.
- 10) ՀԱԷԿ-ի միջուկային և (կամ) ճառագայթային վթարի դեպքում Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության գործելու և անձնակազմի պաշտպանության պլանը.
- 11) ՀՀ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի վթարային հակազդման պլանը.
- 12) ՀԱԷԿ-ի միջուկային և (կամ) ճառագայթային վթարի դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումների նյութատեխնիկական ապահովման, տուժած բնակչությանը սննդամթերքով ու առաջին անհրաժեշտության այլ միջոցներով ապահովելու և Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության անձնակազմի պաշտպանության պլանը.
- 13) ՀԱԷԿ-ի միջուկային և (կամ) ճառագայթային վթարի դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության գործելու, վարչության անձնակազմի և օդանավակայանում գտնվող ուղևորների պաշտպանության կազմակերպման պլանը.

13.1) ՀԱԷԿ-ի միջուկային և (կամ) ճառագայթային վթարի դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության գործելու և անձնակազմի պաշտպանության պլանը.

14) ՀԱԷԿ-ի միջուկային և (կամ) ճառագայթային վթարի դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի գործելու և կոմիտեի ու ստորաբաժանումների անձնակազմերի պաշտպանության կազմակերպման պլանը.

15) ՀԱԷԿ-ի միջուկային և (կամ) ճառագայթային վթարի դեպքում ջրամատակարարման, ջրահեռացման ցանցերի հետախուզման, ջրային ռեսուրսների հետագա հսկողության ապահովման ՀՀ ՏԿՆ ՋՏՊԿ-ի անձնակազմի պաշտպանության պլանը.

16) ՀԱԷԿ-ի միջուկային և (կամ) ճառագայթային վթարի դեպքում պետական ռեզերվների կարգավորման պլանը.

17) Հայաստանի Հանրապետության Արմավիրի և Արագածոտնի մարզային արտակարգ իրավիճակների հանձնաժողովների՝ ՀԱԷԿ-ի դեպքում վթարային հակազդման պլանները.

18) Հայաստանի Հանրապետության Արմավիրի, Արագածոտնի, Կոտայքի և Շիրակի մարզային տարահանման հանձնաժողովների պլանները.

19) ՆՊՄԻ և ՇՊՄՊ գոտում գտնվող համայնքների՝ արտակարգ իրավիճակներում գործելու պլանները.

20) ՆՊՄԻ և ՇՊՄՊ գոտում գտնվող կազմակերպությունների անձնակազմերի պաշտպանության պլանները.

21) ՀԱԷԿ-ի միջուկային և (կամ) ճառագայթային վթարի դեպքում ճառագայթային մոնիթորինգի կազմակերպման պլանը.

22) ՀԱԷԿ-ի միջուկային և ճառագայթային վթարների դեպքում լրատվության ապահովման պլանը.

23) ՀԱԷԿ-ի միջուկային և (կամ) ճառագայթային վթարի դեպքում հակահրդեհային ապահովման պլանը.

23.1) ՀԱԷԿ-ի միջուկային և (կամ) ճառագայթային վթարի դեպքում օդերևութաբանական ապահովման պլանը.

23.2) ՀԱԷԿ-ի միջուկային և (կամ) ճառագայթային վթարի դեպքում Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության գործողությունների և անձնակազմի պաշտպանության պլանը:

*(5-րդ կետը փոփ. 21.08.08 N 1042-Ն, խմբ., լրաց, փոփ. 22.07.10 N 926-Ն)*

## II. ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

6. Հայաստանի Հանրապետության տարածքում հնարավոր են հետևյալ միջուկային և ճառագայթային վթարներն ու վթարների սպառնալիքները՝

1) ՀԱԷԿ-ի արտանախագծային վթար.

2) ՀԱԷԿ-ի արտանախագծային վթարի սպառնալիք (պատճառը՝ տեխնոլոգիական խափանում կամ անձնակազմի սխալ գործողություն).

3) ՀԱԷԿ-ի արտանախագծային վթարի սպառնալիք (պատճառը՝ արտաքին ազդեցություն կամ ղեկավարման վահանակի անձնակազմի գործելու անհնարիություն).

4) ՀԱԷԿ-ի նախագծային վթար.

5) ՀԱԷԿ-ի նախագծային վթարի սպառնալիք (պատճառը՝ տեխնոլոգիական խափանում կամ անձնակազմի սխալ գործողություն)։

6) ՀԱԷԿ-ի նախագծային վթարի սպառնալիք (պատճառը՝ արտաքին ազդեցություն կամ ղեկավարման վահանակի անձնակազմի գործելու անհնարինություն)։

7) տեխնոլոգիական գործընթացին սպառնացողի ոչ տեխնոլոգիական միջադեպ (հրդեհ, պայթյուն և այլն) կամ ՀԱԷԿ-ի վրա վտանգավոր արտաքին ազդեցության սպառնալիք։

8) փոխադրման փաթեթի վնասում՝ աշխատած միջուկային վառելիքի փոխադրման ժամանակ։

9) փոխադրման փաթեթի վնասման իրական սպառնալիք (ճանապարհային վթար, հրդեհ և այլն)՝ աշխատած միջուկային վառելիքի փոխադրման ժամանակ։

7. ՀԱԷԿ-ի միջուկային և ճառագայթային վթարների դեպքում բնակչության պաշտպանության բնագավառում՝

1) Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության կողմից իրականացվող գործառնություններն են՝  
ա. ռադիոակտիվ աղտոտված գոտուց բնակչության տարահանման, տուժածների և հիվանդների տեղափոխման համար անհրաժեշտ տրանսպորտային միջոցների ապահովումը,

բ. վթարի դեպքում բնակչության և կառավարման մարմինների ազդարարման իրականացմանն աջակցությունը,

գ. բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացման ընթացքում կապի ապահովումը,

դ. նախարարության և ենթակա ստորաբաժանումների անձնակազմերի պաշտպանության կազմակերպումը։

2) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության կողմից իրականացվող գործառնություններն են՝

ա. պետական կառավարման մարմինների ղեկավարների և բնակչության ազդարարման կազմակերպումը,

ա.1. **ՀԱԷԿ-ի միջուկային և (կամ) ճառագայթային վթարների դեպքում Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության պլանը գործողության մեջ դնելը.**

բ. բնակչության պաշտպանությանը վերաբերող որոշումների նախագծերի նախապատրաստումը,

գ. բնակչության պաշտպանության միջոցառումների համակարգումը,

դ. հակահրդեհային անվտանգության ապահովումը,

ե. վթարային ճառագայթային մոնիթորինգի կազմակերպումը և իրականացումը։

ե.1. համապատասխան ոլորտները համակարգող Հայաստանի Հանրապետության պետական մարմինների հետ համատեղ պետական պահուստում պահպանման ենթակա նյութական արժեքների անվանացանկի, ինչպես նաև դրանց կուտակման նորմաների մշակման ու փոփոխման ուղղությամբ աշխատանքների իրականացումը և նշված անվանացանկը Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը ներկայացնելը։

ե.2. համապատասխան ոլորտները համակարգող Հայաստանի Հանրապետության պետական մարմինների հետ համատեղ պատասխանատու պահպանումն իրականացնող կազմակերպությունների ցանկի մշակման ու փոփոխման ուղղությամբ աշխատանքների իրականացումը՝ այդ ցանկը Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը ներկայացնելը։

ե.3. պետական պահուստի նյութական արժեքների կուտակման, ապամարագրման, թարմացման և փոխարինման հեռանկարային ու

տարեկան ծրագրերի նախագծերը սահմանված կարգով մշակելը և Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը ներկայացնել.

ե.4. պատասխանատու պահպանում իրականացնող կազմակերպություններում և պետական ռեզերվների գործակալության համակարգի կազմակերպություններում ու պետական պահուստի նյութական արժեքների կուտակման, բացթողման, վերադարձման, թարմացման, փոխարինման, տարածքային տեղաբաշխման սահմանված ծրագրերի և առաջադրանքների կատարման նկատմամբ հսկողության իրականացումը.

ե.5. փաստացի և կանխատեսվող եղանակային պայմանների մասին տեղեկատվության տրամադրումը.

ե.6. ՀԱԷԿ-ի շտապ պաշտպանական միջոցառումների պլանավորման գոտում գամմա ճառագայթման հզորության, իսկ ազդակիր տարածքներում՝ նաև տեղանքի արտաքին ռադիոակտիվ աղտոտվածության մոնիթորինգի իրականացումը և տեղեկատվության տրամադրումը.

3) ՀԱԷԿ-ի միջուկային և (կամ) ճառագայթային վթարների դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի գործառույթներն են՝

ա. ՀԱԷԿ-ից ստացվող տվյալների և վթարային ճառագայթային մոնիթորինգի արդյունքների հիման վրա ՀԱԷԿ-ում ու դրան հարող տարածքներում իրավիճակի գնահատումը,

բ. իրավիճակի գնահատման հիման վրա դրա հնարավոր փոփոխության կանխատեսումը,

գ. իրավիճակի գնահատման ու դրա հնարավոր փոփոխության կանխատեսման հիման վրա Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությանը բնակչության պաշտպանության նպատակով անհրաժեշտ պաշտպանական միջոցառումներ իրականացնելու վերաբերյալ առաջարկությունների տրամադրումը,

դ. «Միջուկային վթարի մասին օպերատիվ տեղեկացման մասին» կոնվենցիային համապատասխան՝ միջուկային վթարի մասին միջազգային օպերատիվ ազդարարումը.

4) Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության կողմից իրականացվող գործառույթներն են՝

ա. Հայաստանի Հանրապետությունում դիվանագիտական ներկայացուցչությունների և միջազգային կազմակերպությունների իրազեկումը, նրանց անձնակազմերի պաշտպանությանը մասնակցությունը, վիզային ռեժիմի կարգավորումը,

բ. օգնության ժամանած փրկարարական խմբերի անձնակազմերի՝ Հայաստանի Հանրապետության մուտքի արտոնագրի պարզեցված տարբերակով տրամադրման ապահովումը,

գ. արտերկրներից անհրաժեշտ մարդասիրական օգնության ստացման կազմակերպումը,

դ. նախարարության անձնակազմի պաշտպանության կազմակերպումը.

5) Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության կողմից իրականացվող գործառույթներն են՝

ա. աջակցությունը մարգագետնաբաններին և տեղական ինքնակառավարման մարմիններին՝ ռադիոակտիվ աղտոտված գոտուց գյուղատնտեսական կենդանիների և գյուղատնտեսական արտադրանքի պաշարների դուրսբերման կազմակերպման գործում,

բ. աջակցությունը գյուղատնտեսական մթերքների, անասնակերի ճառագայթաակտիվ նյութերով ռադիոակտիվ աղտոտվածության

աստիճանի և դրանց օգտագործման պիտանիության որոշման գործում,

գ. ճառագայթային, քիմիական ու մանրէաբանական իրավիճակի մշտական հսկողության համակարգի շրջանակներում գործառնությունների իրականացումը,

դ. նախարարության և ենթակա ստորաբաժանումների անձնակազմերի պաշտպանության կազմակերպումը.

դ.1. սննդամթերքի որակի և պիտանիության նկատմամբ հսկողության իրականացում.

6) Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից իրականացվող գործառնություններն են՝

ա. տարահանված և անվտանգ բնակավայրերում տեղաբաշխված դպրոցականների ուսուցման կազմակերպումը,

բ. ռադիոակտիվ աղտոտված գոտում գտնվող հանրակրթական դպրոցներում և այլ ուսումնական հաստատություններում պատսպարման կազմակերպումը,

գ. ռադիոակտիվ աղտոտված գոտուց հանրակրթական դպրոցների և այլ ուսումնական հաստատությունների տարահանումը,

դ. դպրոցներում և այլ ուսումնական հաստատություններում պարբերաբար «ՀԱԷԿ-ի վթարի դեպքում գործողությունները» թեմայով ուսուցման պլանավորումը և անցկացումը,

ե. նախարարության, ենթակա ստորաբաժանումների և կազմակերպությունների անձնակազմերի պաշտպանության ապահովումը.

7) Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության կողմից իրականացվող գործառնություններն են՝

ա. համայնքի ղեկավարի և մարզային փրկարարական վարչությունների հետ համատեղ՝ մասնակցությունը բնակչության պատսպարման համար պիտանի պաշտպանական կառույցների, նկուղային հարկերի հարմարեցմանը, դրանց պատրաստ վիճակի ապահովմանը,

բ. մարզպետարանների և մարզային փրկարարական վարչությունների հետ համատեղ՝ մասնակցությունը պաշտպանական կառույցներին բնակչության ամրագրմանը,

գ. մասնակցությունը տարահանված բնակչության կենսաապահովմանը,

դ. նախարարության և ենթակա ստորաբաժանումների անձնակազմերի պաշտպանության կազմակերպումը.

8) Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կողմից իրականացվող գործառնություններն են՝

ա. էներգամատակարարման ցանցերի վիճակի հետազոտումը,

բ. մասնակցությունը տարահանված բնակչության կենսաապահովմանը,

գ. Հայաստանի Հանրապետության տարածքում էներգամատակարարման կայունության ապահովումը,

դ. տարահանված համայնքների վարչական տարածքում գազամատակարարման և էներգամատակարարման դադարեցումը,

ե. վթարային պլանավորման գոտիների բնակավայրերի էներգամատակարարումը,

զ. նախարարության և ստորաբաժանումների անձնակազմերի պաշտպանության կազմակերպումը,

է. մասնակցությունը տարահանված բնակչության կենսաապահովմանը.

9) Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության կողմից իրականացվող գործառնություններն են՝

ա. մասնակցությունը տարահանված բնակչության կենսաապահովմանը,

բ. շրջակա միջավայրի (5, 10 կմ գոտիներ) ճառագայթային մոնիթորինգի իրականացումը,

գ. նախարարության և ստորաբաժանումների անձնակազմերի պաշտպանության կազմակերպումը.

10) Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից իրականացվող գործառույթներն են՝

ա. տուժած բնակչության բժշկական ապահովման կազմակերպումը,

բ. տուժածներին և հիվանդներին աղտոտված գոտուց տարահանելու աշխատանքների համակարգումը,

գ. մասնակցությունը տարահանված բնակչության կենսաապահովմանը,

դ. տարահանման բժշկական ապահովումը,

ե. ռադիոակտիվ աղտոտված գոտուց տուժածների սանիտարական մաքրման կազմակերպումը,

զ. նախարարության և ենթակա ստորաբաժանումների անձնակազմերի պաշտպանության կազմակերպումը.

11) Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության գործառույթներն են՝

ա. ցամաքային ճառագայթային մոնիթորինգի կազմակերպումը,

բ. փրկարարական աշխատանքների իրականացման համար ուժերի և միջոցների տրամադրումը,

գ. սանիտարական և հատուկ մշակման կետերի ծավալումը,

դ. նախարարության և ստորաբաժանումների անձնակազմերի պաշտպանության կազմակերպումը.

դ.1. աղտոտված գոտիներում հայտնված զոռամասերի անձնակազմի պաշտպանության կազմակերպումը.

12) Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության գործառույթներն են՝

ա. տուժած բնակչությանն առաջին անհրաժեշտության պարագաներով ու միջոցներով ապահովելը,

բ. մասնակցությունը տարահանված բնակչության կենսաապահովմանը,

գ. տարահանվածներին մաքուր հագուստով ապահովելը,

դ. նախարարության և ենթակա ստորաբաժանումների ու կազմակերպությունների անձնակազմերի պաշտպանության կազմակերպումը,

դ.1. սննդի և սննդամթերքի մատակարարման շարժական կետերի միջոցով տուժած բնակչությանը սննդով ապահովումը,

դ.2. հնարավոր աղտոտված գոտում վտանգավոր կազմակերպությունների անվտանգ շահագործման և անձնակազմի պաշտպանության կազմակերպումը,

դ.3. գործունեությունը դադարեցնող և չդադարեցնող կազմակերպությունների ցուցակի ներկայացում, գործունեությունը շարունակող կազմակերպությունների անձնակազմի պաշտպանության կազմակերպում,

12.1) Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության կողմից իրականացվող գործառույթներն են՝

ա. սփյուռքի օգնությամբ հումանիտար օգնության հայթայթումը, վերականգնողական բուժման կազմակերպումն արտերկրում.

բ. վթարային աղտոտված գոտում գտնվող սփյուռքահայերի հաշվառումը.

գ. մասնակցությունը տարահանված բնակչության կենսաապահովմանը.

դ. նախարարության և ենթակա ստորաբաժանումների անձնակազմերի պաշտպանության կազմակերպումը

13) *(ենթակետն ուժը կորցրել է 22.07.10 N 926- Ն)*

14) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության կողմից

իրականացվող գործառույթներն են՝

- ա. օգնության նպատակով ժամանող օտարերկրյա ինքնաթիռների վայրէջքի և բեռնաթափման ապահովումը,
- բ. վարչության անձնակազմի և օդանավակայանում գտնվող ուղևորների պաշտպանության կազմակերպումը.

15) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության կողմից իրականացվում են օրենքով և այլ իրավական ակտերով իրեն վերապահված գործառույթները.

16) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից իրականացվող գործառույթներն են՝

- ա. մասնակցությունը բնակչության ազդարարմանը և իրազեկմանը,
- բ. ռադիոակտիվ աղտոտված գոտում գտնվող բնակավայրերի գույքի և նյութական արժեքների պահպանման կազմակերպումը,
- գ. բնակավայրերում, կազմակերպություններում, բնակչության տարահանման հավաքակետերում ու տրանսպորտային երթուղիներում հասարակական կարգի պահպանումը,
- դ. անցագրային ռեժիմի կազմակերպումը և իրականացումը,
- ե. պարետային ծառայության կազմակերպումը,
- զ. ոստիկանության անձնակազմի պաշտպանության կազմակերպումը.

զ.1. տարահանվող բնակչության համար նախատեսված սննդամթերքի և առաջին անհրաժեշտության ապրանքների բաշխման կետերի ու պահեստների պահպանության իրականացումը.

17) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից իրականացվող գործառույթներն են՝

- ա. արտերկրից որպես մարդասիրական օգնություն ներկրվող նյութական արժեքների անարգել ներմուծման ապահովումը,
- բ. ժամանող փրկարար ուժերի հաշվառումը և անարգել մուտքի ապահովումը,
- գ. Հայաստանի Հանրապետությունից արտահանվող բեռների նկատմամբ ճառագայթային հսկողության իրականացումը,
- դ. կոմիտեի և ստորաբաժանումների անձնակազմերի պաշտպանության կազմակերպումը.

18) Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի կողմից իրականացվող գործառույթներն են՝

- ա. ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերի վիճակի հետախուզումը, վիճակի գնահատումը,
- բ. կապտաժների և օրվա կարգավորման ջրամբարների հերմետիկացումը,
- գ. ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերի վթարների վերացումը,
- դ. տուժածներին, տարահանվողներին ջրով ապահովելը,
- ե. սանիտարական և հատուկ մշակման կետերը ջրով ապահովելը,
- զ. կոմիտեի և ստորաբաժանումների անձնակազմերի պաշտպանության կազմակերպումը.

19) Հայաստանի Հանրապետության Արմավիրի և Արագածոտնի մարզպետների կողմից իրականացվող գործառույթը մարզի



բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումն է.

20) Հայաստանի Հանրապետության Շիրակի և Կոտայքի մարզպետների կողմից իրականացվող գործառույթը Հայաստանի Հանրապետության Արմավիրի և Արագածոտնի մարզերից տարահանված բնակչության տեղավորումը և նրանց առաջին անհրաժեշտության առարկաներով ապահովումն է.

21) ՆՊՄԻ և ՇՊՄՊ գոտիներում գտնվող համայնքների ղեկավարների կողմից իրականացվող գործառույթն իրենց լիազորությունների սահմաններում համայնքի բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումն ու դրանց ղեկավարումն է.

22) ՆՊՄԻ և ՇՊՄՊ գոտիներում գտնվող կազմակերպությունների ղեկավարների կողմից իրականացվող գործառույթն իրենց լիազորությունների սահմաններում անձնակազմի պաշտպանության միջոցառումների կազմակերպումն ու դրանց ղեկավարումն է.

23) «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության գործառույթը բնակչության իրազեկումն է.

24) «Հայաստանի հանրային ռադիո» փակ բաժնետիրական ընկերության գործառույթը բնակչության իրազեկումն է:

25) *(Ենթակետն ուժը կորցրել է 22.07.10 N 926- Ն)*

*(7-րդ կետը փոփ. 08.01.09 N 34- Ն, 21.08.08 N 1042- Ն, փոփ., լրաց, խմբ. 22.07.10 N 926- Ն)*

8. Վահանաձև գեղձի արգելափակման համար նախատեսված կայուն յոդի պատրաստուկների անհրաժեշտ քանակությունը նախօրոք տրվում է ՆՊՄԻ և ՇՊՄՊ գոտիների համայնքների բնակչությանը և պահպանվում նրանց մոտ, ինչպես նաև՝ կազմակերպությունների ղեկավարներին՝ ըստ աշխատողների թվի:

9. Բնակչության պաշտպանության համար նախատեսված անհատական պաշտպանության միջոցները ՆՊՄԻ և ՇՊՄՊ գոտիներում գտնվող բնակավայրերի բնակչությանը բաշխվում են նախօրոք և պահպանվում նրանց մոտ, ինչպես նաև տրվում են կազմակերպությունների ղեկավարներին՝ ըստ աշխատողների թվի:

10. Բնակչության պատսպարման համար ՆՊՄԻ և ՇՊՄՊ գոտիներում օգտագործվում են ապաստարաններ, թաքստոցներ և պարզագույն պաշտպանական կառույցներ, ինչպես նաև մարդկանց տներն ու բնակարանները, բնակելի շենքերի առաջին և նկուղային հարկերը, որոնք պետք է նախօրոք և վտանգի առաջացման դեպքում անմիջապես հարմարեցվեն այդ նպատակին:

11. Վթարային արձագանքող ստորաբաժանումները նախապես ապահովվում են կայուն յոդի պատրաստուկներով, անհատական պաշտպանական միջոցներով, անհատական դոզաչափերով, ռադիոմետրիկ սարքավորումներով՝ մոնիթորինգ անցկացնելու համար, և յուրաքանչյուր 6 ամիսը մեկ անգամ անցնում են ուսուցում:

12. Բնակչության պաշտպանության միջոցառումների արդյունավետ իրականացման նպատակով ՆՊՄԻ գոտում գտնվող համայնքների բնակչությունը վթարի մասին ազդարարվում է ՀԱԷԿ-ից տրվող «Ճառագայթային վտանգ» ազդանշանի միջոցով: Բնակչության համար այս ազդանշանը հանդիսանում է անհատական պաշտպանական միջոցների կիրառման, կայուն յոդի պատրաստուկների ընդունման և պատսպարման մասին հրահանգ:

13. Պատսպարման վայրերից դուրս գալու և ռադիոակտիվ աղտոտված գոտում գործելակերպի կանոնների մասին տեղեկատվությունը բնակչությանը հասցվում է հեռուստատեսության, ռադիոյի և շարժական բարձրախոս սարքավորումների միջոցով:

14. Ռադիոակտիվ աղտոտված գոտում հայտնված համայնքներից բնակչության տարահանումը կազմակերպվում է պատսպարման

վայրերից՝ ինչպես տրամադրված տրանսպորտային միջոցներով, այնպես էլ սեփական տրանսպորտով:

15. Ավտոտրանսպորտով տարահանման միջոցառումներն իրականացվում են երկու փուլով՝ տարահանվող համայնքներից մինչև ՇՊՄՊ գոտու սահմանագիծը, այնտեղից՝ սանիտարական մշակում անցնելուց հետո մարդիկ մեկ այլ տրանսպորտային միջոցով տեղափոխվում են մինչև վերաբնակեցման վայր, իսկ սեփական տրանսպորտային միջոցները հատուկ մշակում անցնելուց հետո շարունակում են երթևեկությունը:

16. ՇՊՄՊ գոտում գտնվող համայնքների բնակչության պաշտպանությունն իրականացվում է ընտրովի՝ ըստ ճառագայթային մոնիթորինգի տվյալների: Այդ համայնքների բնակչության պաշտպանության միջոցառումների անցկացման մասին հրահանգ է հանդիսանում «Ճառագայթային վտանգ» ազդանշանը:

17. ՇՊՄՊ և ԵՊԳՊ գոտիների սահմանագծերում ծավալվում են մարդկանց սանիտարական մշակման (սանթողարան), տեխնիկայի հատուկ մշակման, հսկիչ-անցագրային, բժշկական և աշխատանքների համակարգման կետեր (ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության ուժերով (այսուհետ՝ ՀՀ ԱԻՆ ՀՓԾ) ծավալվում են համակարգման կետեր) (11), որոնց թիվը կարող է փոփոխվել մոնիթորինգի տվյալների արդյունքում և տեղափոխվել մինչև փաստացի ռադիոակտիվ աղտոտվածության տարածքի սահմանագիծը:

**(17-րդ կետը փոփ. 22.07.10 N 926-Ն)**

18. Ծավալված (11) բժշկական կետերում ճառագայթային ազդեցության ենթարկված և այլ ախտորոշումներով բնակչությանը ցուցաբերվում է առաջին բժշկական օգնություն, և նրանք տարահանվում են մասնագիտացված բուժօգնություն:

19. Վերաբնակեցման վայրերում ծավալվում են ընդունման հավաքակայաններ, որտեղ և տարահանված բնակչությունն ապահովվում է ժամանակավոր կացարաններով, սննդով և առաջին անհրաժեշտության այլ միջոցներով:

20. Վթարային (բնակչության պաշտպանության միջոցառումներին մասնակցող) անձնակազմի դոզաչափական հսկողությունն իրականացնում է արձագանքման խմբի ղեկավարը կամ նրա կողմից լիազորված անձը:

21. Բնակչության պաշտպանության միջոցառումների ընթացքում կապը կազմակերպվում է գերկարճալիք ու կարճալիք ռադիոցանցի, ինչպես նաև բջջային, քաղաքային և ուղիղ հեռախոսակապի միջոցներով:

22. Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների միջև կապը կազմակերպվում է հեռախոսակապի միջոցով և N 3 գերկարճալիք ռադիոցանցի միջոցով, որն ընդգրկում է ՀՀ ԱԻՆ ՀՓԾ ճգնաժամային կառավարման կենտրոնը, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությունը, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը, Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեն:

**(22-րդ կետը փոփ. 21.08.08 N 1042-Ն, 08.01.09 N 34-Ն, լրաց. 22.07.10 N 926-Ն)**

23. Հայաստանի Հանրապետության Արմավիրի և Արագածոտնի մարզերի տարահանման հանձնաժողովների ու արտակարգ

իրավիճակներում և ռազմական դրության ժամանակ բնակչության տարահանման հանրապետական հանձնաժողովի միջև կապը կազմակերպվում է հեռախոսակապի միջոցով:

24. ՀՀ ԱԻՆ ՀՓԾ մարզային փրկարարական վարչությունների և ՀՀ ԱԻՆ ՀՓԾ ճգնաժամային կառավարման կենտրոնի միջև կապը կազմակերպվում է N 2 գերկարճալիք ռադիոցանցի միջոցով, որն ընդգրկում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի, Արագածոտնի, Կոտայքի մարզային փրկարարական վարչությունների և ճգնաժամային կառավարման կենտրոնի ռադիոկայանները: ՀՀ ԱԻՆ ՀՓԾ մյուս մարզային փրկարարական վարչության հետ կապը կազմակերպվում է N 1 կարճալիք ռադիոցանցի միջոցով:

**(24-րդ կետը փոփ. 21.08.08 N 1042-Ն)**

25. ՇՊՄՊ և ԵՊԳՊ գոտիների սահմանագծերում իրականացվող միջոցառումների կառավարման նպատակով ստեղծվում է N 4 գերկարճալիք ռադիոցանց, որն ընդգրկում է ՀՀ ԱԻՆ ՀՓԾ ճգնաժամային կառավարման կենտրոնը, Արմավիրի մարզային փրկարարական վարչությունը և մարդկանց սանիտարական մշակման, տեխնիկայի հատուկ մշակման, հսկիչ-անցագրային, բժշկական և աշխատանքների համակարգման կետերը:

**(25-րդ կետը փոփ. 21.08.08 N 1042-Ն)**

26. ՀԱԷԿ-ի ընդհանուր վթարի դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումների համար ՆՊՄԻ և ՇՊՄՊ գոտիներում ներգրավվում են հետևյալ ուժերը և միջոցները`

1) վթարային ճառագայթային մոնիթորինգի համար` ՀՀ ԱԻՆ ՀՓԾ, Հայաստանի Հանրապետության զինված ուժեր.

2) մարդկանց սանիտարական մշակման, տարածքների և տեխնիկայի հատուկ մշակման համար` ՀՀ ԱԻՆ ՀՓԾ, ՀՀ ՏԿՆ ՋՏՊԿ, Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի ռադիացիոն, քիմիական և կենսաբանական պաշտպանության զորքեր, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն.

3) առաջին բժշկական օգնության և տուժածների տեղափոխման համար` Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության Մեծամորի քաղաքային հիվանդանոցի մասնագիտացված բժշկական բրիգադներ (առնվազն 4 բժիշկ).

4) գերձառագայթահարված հիվանդների ախտորոշման և բժշկական ստուգումների համար` Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության օրթոպեդիայի, այրվածքների և ճառագայթաբանության կենտրոն.

5) գերձառագայթահարված անձանց բուժման համար` Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն.

6) հակահրդեհային գործողությունների ապահովման համար` ՀՀ ԱԻՆ ՀՓԾ տարածքային ստորաբաժանումների հրշեջ-փրկարարական ջոկատներից 2 համահավաք հակահրդեհային հենակետեր (առնվազն 60 մարդ)` 10 միավոր ԱԲ-40 տեխնիկայով.

7) ՇՊՄՊ գոտու շրջափակման համար` Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության համապատասխան ստորաբաժանումները.

8) տարահանման միջոցառումների տրանսպորտային ապահովման համար` Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարությունը` տարահանման գործում ներգրավվում է առնվազն 699 միկրոավտոբուս և 30 երկաթուղային մարդատար վագոն (նախատեսվում են տրանսպորտային միջոցներ` իրավիճակի կտրուկ փոփոխման դեպքում լրացուցիչ տարահանում իրականացնելու

համար).

9) բնակչության ազդարարման և տեղեկատվական ապահովման համար՝ Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարությունը.

10) վթարի մասին տեղեկատվության ապահովման համար՝ Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարությունը, ՀՀ ԱԻՆ ՀՓԾ-ն.

11) բնակչության ազդարարման կազմակերպման համար՝ ՀՀ ԱԻՆ ՀՓԾ-ն:

*(26-րդ կետը փոփ. 21.08.08 N 1042-Ն, խմբ., փոփ., լրաց 22.07.10 N 926-Ն)*

27. Վթարային արձագանքող ստորաբաժանումները նախապես ապահովվում են կայուն յոդի պատրաստուկներով, անհատական պաշտպանության միջոցներով, անհատական դոզաչափերով, ռադիոմետրիկ սարքավորումներով Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության պետական ռեզերվների գործակալության կողմից՝ համապատասխան պետական կառավարման մարմինների և կազմակերպությունների ղեկավարների ներկայացրած հայտերի հիման վրա:

*(27-րդ կետը փոփ. 21.08.08 N 1042-Ն)*

28. Հայաստանի Հանրապետության նախարարությունների և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր մարմինների կողմից ներգրավված ուժերի և միջոցների համակողմանի ապահովումն իրականացնում է տվյալ պետական կառավարման մարմինը:

29. ՆՊՄԻ և ՇՊՄՊ գոտիներում գտնվող համայնքների բնակչության անհատական պաշտպանության միջոցների բաշխումը կազմակերպում են Հայաստանի Հանրապետության Արագածոտնի և Արմավիրի մարզպետարանները, որոնք անհրաժեշտ քանակությամբ անհատական պաշտպանության միջոցներն ստանում են Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության պետական ռեզերվների գործակալությունից՝ ըստ ներկայացված հայտի:

*(29-րդ կետը փոփ. 21.08.08 N 1042-Ն)*

30. Ըստ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության ներկայացրած հայտի՝ ՆՊՄԻ և ՇՊՄՊ գոտիներում գտնվող համայնքների բնակչությանը կայուն յոդի պատրաստուկների անհրաժեշտ քանակությունը Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունն ստանում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության պետական ռեզերվների գործակալությունից և տրամադրում ՆՊՄԻ և ՇՊՄՊ գոտիներում գտնվող բուժհիմնարկներին, որոնք էլ իրենց հերթին բաշխում են ՆՊՄԻ և ՇՊՄՊ գոտիներում գտնվող համայնքների բնակչությանը:

*(30-րդ կետը փոփ. 21.08.08 N 1042-Ն)*

31. Ըստ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության ներկայացրած հայտի՝ ՆՊՄԻ և ՇՊՄՊ գոտիներից տարահանվող բնակչությանն առաջին անհրաժեշտության պարագաների անհրաժեշտ քանակությունը Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունն ստանում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության պետական ռեզերվների գործակալությունից և կազմակերպում բաշխումը:

*(31-րդ կետը փոփ. 21.08.08 N 1042-Ն, 22.07.10 N 926-Ն)*

32. Ըստ Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության ներկայացրած հայտի՝ ՀԱԷԿ-ի միջուկային և (կամ)

ճառագայթային վթարների դեպքում Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարությունը Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության պետական ռեզերվների գործակալությունից ստանում է վառելիքաքսուքային նյութեր՝ տարահանման միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ տրանսպորտային միջոցներն ապահովելու նպատակով:

*(32-րդ կետը փոփ. 21.08.08 N 1042- Ն)*

33. ՀԱԷԿ-ի ընդհանուր վթարի ժամանակ բնակչության պատշապանության նպատակով արտաքին օգնությունը հայցվում և ստացվում է «Միջուկային վթարի կամ ճառագայթային իրավիճակի դեպքում օգնության մասին» կոնվեցիայի համաձայն:

34. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունն ապահովում է Հայաստանի Հանրապետություն արտերկրից ժամանած օգնության մուտքը, որը բաշխվում է ՀՀ ԱԻՆ ՀՓԾ-ի կողմից:

*(34-րդ կետը փոփ. 21.08.08 N 1042- Ն)*

35. Օգնության ժամանած փրկարարական կամ այլ հատուկ ուժերի խնդրադրումն իրականացվում է ՀՀ ԱԻՆ ՀՓԾ-ի կողմից:

*(35-րդ կետը փոփ. 21.08.08 N 1042- Ն)*

35.1. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության սույն պլանի 7-րդ կետի 12-րդ ենթակետի «ա» պարբերությամբ նախատեսված գործառույթի իրականացմանն աջակցում են Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարությունը ու Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությունը:

*(35.1 կետը լրաց. 22.07.10 N 926- Ն)*

### III. ՎԹԱՐԱՅԻՆ ՀԱԿԱԶԴՈՒՄԸ

36. ՀԱԷԿ-ի ճգնաժամային կառավարման կենտրոնից ՀԱԷԿ-ում տեղի ունեցած ճառագայթային վթարի մասին հաղորդագրությունը ծածկագրի ձևով փոխանցվում է ՀՀ ԱԻՆ ՀՓԾ ճգնաժամային կառավարման կենտրոն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտե ու Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն:

*(36-րդ կետը փոփ. 21.08.08 N 1042- Ն, 08.01.09 N 34- Ն, լրաց. 22.07.10 N 926- Ն)*

37. Տեղեկատվությունը ճշգրտելու նպատակով ՀՀ ԱԻՆ ՀՓԾ ճգնաժամային կառավարման կենտրոնի հերթապահ ուժերի ղեկավարը կապ է հաստատում ՀԱԷԿ-ի ճգնաժամային կառավարման կենտրոնի հետ (ուղիղ կապ, հեռախոսային կապ և այլն): «Ատոմ-8», «Ատոմ-7», «Ատոմ-6», «Ատոմ-5», «Ատոմ-4» ծածկագրերն ստանալու դեպքում ՀՀ ԱԻՆ ՀՓԾ ճգնաժամային կառավարման կենտրոնից ազդանշանը փոխանցվում է սույն պլանի 3-րդ կետում նշված պետական կառավարման մարմինների ղեկավարներին կամ նրանց փոխարինող անձանց, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության օպերատիվ հերթապահներին:

**(37-րդ կետը փոփ. 21.08.08 N 1042-Ն)**

38. ՀՀ ԱԻՆ ՀՓԾ ճգնաժամային կառավարման կենտրոնից ազդարարվում են մոնիթորինգի խմբերի ղեկավարները, ՀՓԾ Արագածոտնի, Շիրակի և Կոտայքի մարզային փրկարարական վարչությունների օպերատիվ հերթապահները:

**(38-րդ կետը փոփ. 21.08.08 N 1042-Ն)**

39. ՀՀ ԱԻՆ ՀՓԾ-ի կողմից կազմակերպվում է ՆՊՄԻ և ՇՊՄՊ գոտիների մոնիթորինգը:

**(39-րդ կետը փոփ. 21.08.08 N 1042-Ն)**

40. Պետական կառավարման մարմինների ղեկավարներն իրենց հերթին կազմակերպում են արձագանքող վթարային խմբերի անձնակազմի ազդարարումը և հավաքը մշտական աշխատավայրերում (ծառայության վայրերում), կազմակերպում նախարարությունների (գերատեսչությունների) օպերատիվ խմբերի աշխատանքը: Գործի մեջ են դնում սույն պլանի I գլխի 5-րդ կետով նախատեսված իրենց գործողությունների պլանները:

**(40-րդ կետը լրաց. 22.07.10 N 926-Ն)**

41. Զուգահեռ ազդանշանները ՀԱԷԿ-ի ճգնաժամային կառավարման կենտրոնից փոխանցվում են ՀՀ ԱԻՆ ՀՓԾ Արմավիրի մարզային փրկարարական վարչության դիսպետչերական կետ: Արմավիրի մարզային փրկարարական վարչության օպերատիվ հերթապահը կազմակերպում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի արտակարգ իրավիճակներում գործող մշտական հանձնաժողովի և տարահանման հանձնաժողովի անդամների ազդարարումը:

**(41-րդ կետը փոփ. 21.08.08 N 1042-Ն)**

42. «Ատոմ-3», «Ատոմ-2», «Ատոմ-1» ծածկագրերն ստանալու դեպքում սույն պլանի 40-րդ կետում նշված միջոցառումների իրականացումից հետո պետական կառավարման մարմինների ղեկավարները ժամանում են Հայաստանի Հանրապետության կառավարության շենք՝ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական հանձնաժողովի արտահերթ նիստի:

**(42-րդ կետը փոփ. 22.07.10 N 926-Ն)**

43. ՆՊՄԻ գոտու համայնքների բնակչության ազդարարումն իրականացվում է ՀԱԷԿ-ից «Ճառագայթային վտանգ» ազդանշանը հնչեցնելու միջոցով:

44. ՇՊՄՊ գոտում բնակչության ազդարարումն իրականացվում է ՀՓԾ Արմավիրի և Արագածոտնի մարզային փրկարարական վարչությունների օպերատիվ հերթապահների և ՀՀ ԱԻՆ ՀՓԾ ճգնաժամային կառավարման կենտրոնից «Ճառագայթային վտանգ» ազդանշանը հնչեցնելու միջոցով:

**(44-րդ կետը փոփ. 21.08.08 N 1042-Ն, խմբ. 22.07.10 N 926-Ն)**

45. Ազդանշանը տրվում է շչակների միջոցով, 3 բուպե անընդմեջ տևողությամբ, բնակչության հետագա գործողությունների վերաբերյալ հաղորդագրությունները տրվում են հեռուստատեսությամբ և ռադիոյով:

46. Անհրաժեշտության դեպքում ազդարարման գործընթացին մասնակցում են նաև Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության շարժական ուժերն ու միջոցները:

47. Ատոմային էներգիայի միջազգային գործակալությանը (այսուհետ՝ ԱԷՄԳ) վթարի մասին տեղեկացվում է Հայաստանի

Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի կողմից:

**(47-րդ կետը փոփ. 08.01.09 N 34-Ն)**

48. Հայաստանի Հանրապետությունում գտնվող միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների դիվանագիտական ներկայացուցչությունների ազդարարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության կողմից:

49. ՀԱԷԿ-ի վթարի դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումների մասին որոշումներն ընդունում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական հանձնաժողովը՝ արտահերթ նիստի ընթացքում, որի աշխատանքներին մասնակցում են Հայաստանի Հանրապետության Արմավիրի, Արագածոտնի, Կոտայքի և Շիրակի մարզպետները կամ նրանց տեղակալները:

50. ՀԱԷԿ-ի վթարի դեպքում տարահանման միջոցառումները ղեկավարում է արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության ժամանակ բնակչության տարահանման հանրապետական հանձնաժողովը:

51. Հայաստանի Հանրապետության Արմավիրի և Արագածոտնի մարզերում ՀԱԷԿ-ի վթարի պայմաններում բնակչության պաշտպանության միջոցառումներ կազմակերպում և իրականացնում են Հայաստանի Հանրապետության Արմավիրի և Արագածոտնի մարզային արտակարգ իրավիճակների մշտական գործող հանձնաժողովները:

52. Տարահանման միջոցառումները մարզերում իրականացնում են Հայաստանի Հանրապետության Արմավիրի, Արագածոտնի, Շիրակի և Կոտայքի մարզային տարահանման հանձնաժողովները:

53. Բնակչության պաշտպանության միջոցառումները համայնքներում և կազմակերպություններում իրականացնում են արտակարգ իրավիճակների հանձնաժողովները:

54. Հանձնաժողովները կառավարումն իրականացնում են հիմնական կառավարման կետերից և իրավիճակի կտրուկ վատթարացման դեպքում անցնում պահեստային կառավարման կետեր:

55. Երևան քաղաքում ճառագայթային իրավիճակի կտրուկ վատացման դեպքում Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական հանձնաժողովը տեղափոխվում է ՀՀ ԱԻՆ ՀՓԾ-ի ճգնաժամային կառավարման կենտրոն:

**(55-րդ կետը փոփ. 21.08.08 N 1042-Ն)**

56. Հայաստանի Հանրապետության նախարարները և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր մարմինների ու պետական մարմինների ղեկավարները կարող են փոխել մշտական աշխատավայրերը՝ միայն Հայաստանի Հանրապետության վարչապետի հետ համաձայնեցնելուց հետո:

57. Օպերատիվ կառավարման նպատակով Հայաստանի Հանրապետության նախարարությունները, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր մարմիններն ու պետական մարմիններն ստեղծում են օպերատիվ խմբեր, որոնց կազմից մեկական լիազորված անձ գործուղվում է ՀՀ ԱԻՆ ՀՓԾ-ի ճգնաժամային կառավարման կենտրոն:

**(57-րդ կետը փոփ. 21.08.08 N 1042-Ն)**

58. Բնակչության պաշտպանության գործողությունները համակարգում է ՀՀ ԱԻՆ ՀՓԾ-ն՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի կողմից տրամադրված խորհուրդները և

ուղղորդվելով միջուկային ու ճառագայթային վթարների դեպքում հակազդման և պաշտպանական միջոցառումների իրականացման մասին որոշումների ընդունման չափանիշներով:

**(58-րդ կետը փոփ. 21.08.08 N 1042-Ն, 08.01.09 N 34-Ն)**

59. «Աղետի գոտի հայտարարելու, աղետի գոտու տարածքը սահմանելու և արտակարգ իրավիճակի հետևանքների նվազեցման և վերացման միջոցառումների մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը նախապատրաստում և հաստատման է ներկայացնում ՀՀ ԱԻՆ ՀՓԾ-ի տնօրենը:

**(59-րդ կետը փոփ. 21.08.08 N 1042-Ն)**

60. ՀԱԷԿ-ից ՆՊՄԻ գոտու համայնքների բնակչության (Մեծամոր քաղաք, Ակնալիճ, Արշալույս, Մայիսյան, Ֆերիկ, Նոր Եղեսիա գյուղեր) ազդարարումն իրականացվում է, երբ ՀԱԷԿ-ում տեղի ունեցած պատահարը որակավորվում է որպես ընդհանուր վթար:

61. Ընդհանուր վթարի արձագանքման միջոցառումներն իրականացվում են հետևյալ ժամանակացույցով`

1) ելնելով վթարի դասակարգումից` անհետաձգելի պաշտպանական միջոցառումների անցկացման վերաբերյալ առաջարկություններ` 30 րոպեի ընթացքում.

2) անհետաձգելի պաշտպանական միջոցառումների անցկացման մասին որոշումների ընդունում` 30 րոպեի ընթացքում.

3) ՆՊՄԻ գոտու մոնիթորինգի անցկացում` 4 ժամվա ընթացքում:

62. ՀԱԷԿ-ի միջուկային վթարի առաջացման վտանգի և միջուկային վթարի առաջացման դեպքում վահանաձև գեղձի արգելափակման (յոդային պրոֆիլակտիկա) են ենթարկվում ՀԱԷԿ-ի անձնակազմը, ՆՊՄԻ գոտիներում գտնվող բնակավայրերի բնակչությունը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության այլ մարզերից և Երևան քաղաքից փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կատարման համար ռադիոակտիվ աղտոտված գոտի ուղարկվող կազմավորումների անձնակազմերը:

63. ՀԱԷԿ-ի ընդհանուր վթարի դեպքում բնակչության պաշտպանության հիմնական ձևերից մեկը ռադիոակտիվ աղտոտված տարածքից բնակչության տարահանումն ու նրանց ժամանակավոր վերաբնակեցումն է անվտանգ տարածքի բնակավայրերում:

64. ՀԱԷԿ-ի վթարի դեպքում ՆՊՄԻ գոտում գտնվող համայնքների բնակչության տարահանումը կազմակերպվում է ավտոտրանսպորտով` պատսպարման վայրերից: ՇՊՄՊ գոտու ճառագայթային աղտոտվածության գոտում հայտնված համայնքների բնակչության տարահանումը նույնպես կազմակերպվում է ավտոտրանսպորտով: Ռադիոակտիվ աղտոտված գոտուց դուրս հայտնված բնակչությունը կարող է տարահանվել հետիոտն:

65. Տարահանումը կարող է իրականացվել ՆՊՄԻ և ՇՊՄՊ գոտիներում ընդգրկվող Հայաստանի Հանրապետության 25 բնակավայրերից (բնակչության թիվը` 95771 մարդ), այդ թվում` Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի 22 բնակավայրերից (բնակչության թիվը` 92734 մարդ) և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի 3 բնակավայրերից (բնակչության թիվը` 3037 մարդ):

66. Տարահանվող բնակչությունը ժամանակավորապես վերաբնակեցվում է ՆՊՄԻ և ՇՊՄՊ գոտիների սահմանից դուրս գտնվող Հայաստանի Հանրապետության 26 բնակավայրերում, այդ թվում` Արմավիրի մարզի 16 բնակավայրերում, Արագածոտնի մարզի 7 բնակավայրերում, Շիրակի մարզի 1 բնակավայրում և Կոտայքի մարզի 2 բնակավայրերում: Այն քաղաքացիները, ովքեր ցանկություն կհայտնեն ժամանակավորապես հանգրվանել իրենց բարեկամների կամ հարազատների մոտ (ՇՊՄՊ գոտուց դուրս), կարող են դա անել`



պայմանով, որ տվյալ քաղաքացին ժամանակավորապես կգրանցվի այդ համայնքի ոստիկանության բաժանմունքում և բուժապասարկման հիմնարկում:

**(66-րդ կետը փոփ. 22.07.10 N 926-Ն)**

67. Ռադիոակտիվ աղտոտվածությամբ տարածքներից տարահանվող մարդկանց գերձառագայթահարման հավանականության նվազման և տարահանվող մարդկանց ու տրանսպորտային միջոցների միջոցով ռադիոակտիվ նյութերի տարածման կանխարգելման նպատակով այդ տարածքների սահմանագծի մոտ ծավալվում են մարդկանց և տեխնիկայի ապաստարկիվացման ու աշխատանքների համակարգման կետեր (11), որոնցում համապատասխան միջոցառումների անցկացման ավարտից հետո մարդկանց տեղափոխում են ժամանակավոր վերաբնակեցման բնակավայրեր: Ելնելով նշվածից՝ տարահանումն իրականացվում է 2 փուլով. առաջին փուլ՝ բնակավայրից մինչև ռադիոակտիվ աղտոտվածությամբ տարածքի սահմանագիծը, 2-րդ փուլ՝ ռադիոակտիվ աղտոտվածությամբ տարածքի սահմանագծից մինչև ժամանակավոր վերաբնակեցման վայր:

68. Ռադիոակտիվ աղտոտված գոտուց տարահանումը կազմակերպելու նպատակով ստեղծվում են տարահանման միջանկյալ հավաքակայաններ՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում՝ 9, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզում՝ 2:

**(68-րդ կետը լրաց. 22.07.10 N 926-Ն)**

69. Բնակչության տարահանումն իրականացվում է համակցված՝ տրանսպորտային միջոցներով և հետիոտն (մինչև 3.5 կմ)՝ մոնիթորինգի արդյունքների հիման վրա:

70. Բնակչության տարահանման տրանսպորտային ապահովման աշխատանքներում առաջին հերթին ներգրավվում են ՆՊՄԻ և ՇՊՄՊ գոտիներում առկա ու տեխնիկապես սարքին վիճակում գտնվող տրանսպորտային միջոցները (անկախ սեփականության ձևից): Դրանց անբավարար թվի դեպքում, արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության ժամանակ բնակչության տարահանման հանրապետական հանձնաժողովի որոշմամբ, տարահանման միջոցառումների իրականացման գործում կարող են ներգրավվել նաև նշված գոտիներից դուրս առկա տրանսպորտային միջոցները:

71. Ռադիոակտիվ աղտոտված ավտոտրանսպորտի անցումը մաքուր տարածք չի թույլատրվում, անհրաժեշտության դեպքում թույլատրվում է միայն հատուկ մշակման ենթարկվելուց հետո:

72. Հատուկ մշակման կետերը ծավալվում են ճառագայթաակտիվ գոտուց դուրս, որպես կանոն, տարահանման երթուղիներին մոտ:

73. Տարահանման ժամկետները (սկիզբը և ավարտը) սահմանվում են արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության ժամանակ բնակչության տարահանման հանրապետական հանձնաժողովի ու Հայաստանի Հանրապետության Արմավիրի և Արագածոտնի մարզային տարահանման հանձնաժողովների կողմից:

74. Հայաստանի Հանրապետության Արմավիրի և Արագածոտնի մարզերի վարչական տարածքներում գտնվող պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների ղեկավարները իրականացված միջոցառումների ու վթարի մասին տեղեկատվությունն առաջնահերթ կարգով տրամադրում են մարզերի համապատասխան արտակարգ իրավիճակների մշտական գործող հանձնաժողովներին, որոնք էլ իրենց հերթին տեղեկատվությունը փոխանցում են Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական հանձնաժողովին:

75. ՀՀ ԱԻՆ ՀՓԾ-ն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեն զանգվածային լրատվության միջոցներին տալիս են օպերատիվ հաղորդագրություն:

*(75-րդ կետը փոփ. 21.08.08 N 1042-Ն, 08.01.09 N 34-Ն)*

76. ՀՀ ԱԻՆ ՀՓԾ-ում կազմակերպվում է մամուլի ասուլիս՝ շահագրգիռ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ, որի ընթացքում ներկայացվում են ստեղծված իրավիճակը, հնարավոր հետագա զարգացումները, իրականացվող միջոցառումները, ինչպես նաև բնակչությանն անհրաժեշտ վարքի կանոնները:

*(76-րդ կետը փոփ. 21.08.08 N 1042-Ն)*

77. Հայաստանի հանրային հեռուստատեսությամբ և հանրային ռադիոյով «Հատուկ թողարկում» խորագրով պարբերաբար հեռարձակվում է ստեղծված իրավիճակի հետագա հնարավոր զարգացումների և իրականացվող միջոցառումների մասին տեղեկատվություն:

78. Բժշկական հակազդման հիմնական խնդիրներն են՝

1) տուժած մարդկանց հայտնաբերումը.

2) հայտնաբերված տուժածների դասակարգումը՝ ըստ նախնական ախտորոշման.

3) տեղում համապատասխան բժշկական օգնության ցուցաբերումը.

4) մասնագիտացված բժշկական հիմնարկներ տուժած մարդկանց փոխադրումը և պետպատվերի շրջանակներում բուժապասարկման իրականացումը:

79. Բնակչության բժշկական հակազդումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և Հայաստանի Հանրապետության Արմավիրի ու Արագածոտնի մարզպետարանների առողջապահության և սոցիալական ապահովման ծառայության ՀԱԷԿ-ի ընդհանուր վթարի դեպքում բժշկական ապահովման պլաններին համապատասխան:

80. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը պատասխանատվություն է կրում տարածքային բժշկական մարմինների կողմից բուժման կազմակերպման պլանների մշակման, մոնիթորինգի և խորհրդատվական օգնության համար՝ ինչպես ամբողջ բնակչությանը, այնպես էլ այն անձանց, ովքեր կարող են աղտոտվել կամ ճառագայթահարվել:

81. ՀԱԷԿ-ի վթարից հետո մինչև ճառագայթային իրավիճակի ճշտումը և ՀԱԷԿ-ի անձնակազմի ու հարակից տարածքի բնակչության դուրսբերումը՝ տուժածներին առաջին բուժօգնությունը ցույց է տրվում ՆՊՄԻ գոտում գտնվող բնակավայրերի բժշկական անձնակազմերի, ինչպես նաև ՀԱԷԿ-ի բժշկական ստորաբաժանման ու չտուժած անձնակազմի կողմից, հետագայում՝ բժշկական կազմավորումների (հրատապ նախաբժշկական և բժշկական օգնության, Հայաստանի Հանրապետության Արմավիրի և Արագածոտնի մարզերի շտապ օգնության կայանների ֆելդշերական ու բժշկական բրիգադներ) ուժերով:

*(81-րդ կետը լրաց, փոփ. 22.07.10 N 926-Ն)*

82. Ռադիոակտիվ աղտոտման տարածման կանխման նպատակով՝ այն մարդիկ, որոնց մոտ հայտնաբերվում է արտաքին ռադիոակտիվ աղտոտում, տեղավորվում են առանձին տեղերում: Հետագա ապաստանի վացման աշխատանքներն իրականացվում են հնարավորինս սեղմ ժամկետներում, և առաջին հերթին ապաստանի վացվում են այն տուժածները, ովքեր ստացել են համեմատաբար բարձր ռադիոակտիվ

աղտոտվածությամբ վերքեր:

83. ՆՊՄԻ և ՇՊՄՊ գոտիներում գտնվող բժշկական կազմակերպությունների (հիմնարկների) անձնակազմերը տարահանվում են այդ գոտու բնակչության տարահանման հետ համատեղ: Տարահանված և անվտանգ գոտու բնակավայրերում ժամանակավորապես բնակեցված բժշկական անձնակազմը ներգրավվում է այդ բնակավայրերի բժշկական կազմակերպությունների (հիմնարկների) աշխատանքներում: ՆՊՄԻ և ՇՊՄՊ գոտիների բնակչության տարահանման հավաքակայաններում ծավալվող բժշկական կետերում շուրջօրյա աշխատանքի ապահովման համար Հայաստանի Հանրապետության Արմավիրի և Արագածոտնի մարզերի բժշկական կազմակերպություններից (հիմնարկներից) տրամադրվում են բժշկական բրիգադներ (բժշկական անձնակազմի աշխատանքի անհնարինության դեպքում կարող է բժշկական անձնակազմ ներգրավվել Հայաստանի Հանրապետության այլ մարզերի բուժհիմնարկներից՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի հրամանով)՝ կազմված բժիշկ-թերապևտից (կամ աշխատանքային բավարար փորձ ունեցող ֆելդշերից) և բուժքրոջից: Բնակչության տարահանման յուրաքանչյուր հավաքակայանի բուժկետին հատկացվում է 3 բրիգադ՝ աշխատանքը երեք հերթափոխով կազմակերպելու համար:

**(83-րդ կետը լրաց, փոփ. 22.07.10 N 926-Ն)**

84. Ընդհանուր վթարի դեպքում ՆՊՄԻ և ՇՊՄՊ գոտիներում գտնվող բնակավայրերում հրդեհային անվտանգությունն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ քաղաքի և Բաղրամյանի գյուղական համայնքի հրշեջ-փրկարարական ջոկատներում կազմակերպվում է ՀՀ ԱԻՆ ՀՓԾ փրկարարական ուժերի և միջոցների հիմնական համահավաք ջոկատների հենակետեր, իսկ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ քաղաքի հրշեջ-փրկարարական ջոկատը նախատեսվում է որպես պահեստային հենակետ (հենակետերի տեղակայումը կարող է փոփոխվել՝ ելնելով ստեղծված իրավիճակից):

**(84-րդ կետը փոփ. 21.08.08 N 1042-Ն)**

85. Վթարի ժամանակ, օպերատիվ իրավիճակի փոփոխման դեպքում, ՀԱԵԿ-ի պահպանության հատուկ հրշեջ ջոկատը տեղակայման վայրից տեղափոխվում է փրկարար ուժերի ղեկավարի որոշմամբ:

**(85-րդ կետը խմբ. 22.07.10 N 926-Ն)**

86. Ռադիոակտիվ աղտոտված գոտում ճառագայթահարման թուլլատրելի դոզա ստացած անձնակազմը փոխարինվում է նույն ստորաբաժանումների հերթափոխից ազատ անձնակազմի հաշվին, անհրաժեշտության դեպքում երկարաժամկետ աշխատանքներ կատարելիս՝ նաև այլ բնակավայրերի հրշեջ-փրկարարական ջոկատների անձնակազմով, որոնք տեղաբաշխվում են Թային և Երևան քաղաքներում կազմակերպված պահուստային հենակետերում:

87. Ռադիոակտիվ աղտոտված գոտում հակահրդեհային միջոցառումները ղեկավարվում են ՀՀ ԱԻՆ ՀՓԾ փրկարարական ուժերի վարչության ռադիոցանցի միջոցով:

**(87-րդ կետը փոփ. 21.08.08 N 1042-Ն)**

88. Ընդհանուր վթարի դեպքում ՆՊՄԻ և ՇՊՄՊ գոտիներում գտնվող բնակավայրերում հասարակական կարգի պահպանման, հատուկ կարևորագույն նշանակության օբյեկտների պահպանման և երթևեկության կարգավորման ապահովման միջոցառումներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության ուժերի կողմից:

89. Հակազդման գործողությունների ժամանակ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության ուժերի հիմնական խնդիրներն են՝

- 1) ՇՊՄՊ գոտիների շրջափակումը.
- 2) տարահանման միջանկյալ կետերում հասարակական կարգի պահպանման հսկիչ-անցագրային կետերի հիմնումը.
- 3) տարահանման երթուղիներում երթևեկության կարգավորման ապահովումը.
- 4) տարահանումից հետո բնակչության ունեցվածքի պահպանումը.
- 5) տարաբնակեցման վայրերում հասարակական կարգի պահպանումը.
- 6) վերաբնակեցման վայրերում տարահանված բնակչության գրանցման կազմակերպումը.
- 7) տարահանումից հետո կարևորագույն նշանակության օբյեկտների պահպանումը:

90. ՆՊՄԻ և ՇՊՄՊ գոտիներում ճառագայթային հսկողությունն իրականացվում է ՀԱԷԿ-ի ընդհանուր վթարի կամ դրա իրական սպառնալիքի դեպքում:

91. ՀԱԷԿ-ի ընդհանուր վթարի իրական սպառնալիքի դեպքում ճառագայթային հսկողության նպատակը ՀԱԷԿ-ից արտանետվող ռադիոակտիվ նյութերի (ռադիոակտիվ ամպի) ՆՊՄԻ և ՇՊՄՊ գոտիներ ներթափանցման գրանցումն է: Հսկողությունն իրականացվում է ՆՊՄԻ և ՇՊՄՊ գոտիներում գամմա ճառագայթով հզորության պարբերական չափմամբ:

92. ՀԱԷԿ-ի ընդհանուր վթարի իրական սպառնալիքի դեպքում ՆՊՄԻ և ՇՊՄՊ գոտիներում գամմա ճառագայթման հզորության պարբերական չափումներն իրականացնում են՝

1) ՆՊՄԻ գոտու բնակավայրերում և ճանապարհների վրա՝ ՀՀ ԱԻՆ ՀՓԾ ռադիացիոն մոնիթորինգի և արձագանքման խմբերը (5 հիմնական խումբ, յուրաքանչյուրում՝ 3 մարդ, և 10 պահեստային խումբ, յուրաքանչյուրում՝ 3 մարդ), Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի ռադիացիոն մոնիթորինգի խումբը (1 խումբ՝ 3 մարդ) ու Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության ռադիացիոն, քիմիական, կենսաբանական պաշտպանության գործերը: Չափումներն իրականացվում են յուրաքանչյուր ժամը մեկ անգամ պարբերությամբ՝ պահպանելով ճառագայթային անվտանգության կանոնները: ՀՀ ԱԻՆ ՀՓԾ խմբերն աշխատում են հերթափոխային կարգով՝ օգտագործելով միննույն սարքերի հնգական լրակազմերը: Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի խումբն իրականացնում է ստուգիչ-հսկողական չափումներ.

2) ՇՊՄՊ գոտու բնակավայրերում և ճանապարհների վրա՝ ՀՀ ԱԻՆ ՀՓԾ ռադիացիոն մոնիթորինգի և արձագանքման խմբերը (5 հիմնական խումբ, յուրաքանչյուրում՝ 3 մարդ, և 10 պահեստային խումբ, յուրաքանչյուրում՝ 3 մարդ), Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի ռադիացիոն մոնիթորինգի խումբը (1 խումբ՝ 3 մարդ) ու Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության ռադիացիոն, քիմիական, կենսաբանական պաշտպանության գործերը: Չափումներն իրականացվում են յուրաքանչյուր 45 րոպեն մեկ անգամ՝ պահպանելով ճառագայթային անվտանգության կանոնները: ՀՀ ԱԻՆ ՀՓԾ խմբերն աշխատում են հերթափոխային կարգով՝ օգտագործելով միննույն սարքերի հնգական լրակազմերը: Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական

կոմիտեի խումբն իրականացնում է ստուգիչ-հսկողական չափումներ:

**(92-րդ կետը փոփ. 21.08.08 N 1042-Ն, 08.01.09 N 34-Ն)**

93. ՀԱԷԿ-ի ընդհանուր վթարի սկզբնական և միջին փուլերում ճառագայթային հսկողության նպատակն է ՆՊՄԻ և ՇՊՄՊ գոտիներում՝

1) ռադիոակտիվ ամպի տարածման ուղղության ճշտումը՝ գամմա ճառագայթման հզորության պարբերական չափմամբ.

2) շրջակա միջավայրի օբյեկտների արտաքին աղտոտվածության ճշտումը:

94. Ռադիոակտիվ ամպի տարածման ուղղության ճշտման նպատակով գամմա- ճառագայթման հզորության չափումներն իրականացնում են՝

1) ՆՊՄԻ գոտու բնակավայրերում և ճանապարհների վրա՝ ՀՀ ԱԻՆ ՀՓԾ ռադիացիոն մոնիթորինգի և արձագանքման խմբերը (5 հիմնական խումբ, յուրաքանչյուրում՝ 3 մարդ, և 10 պահեստային խումբ, յուրաքանչյուրում՝ 3 մարդ), Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի ռադիացիոն մոնիթորինգի խումբը (1 խումբ՝ 3 մարդ) ու Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության ռադիացիոն, քիմիական, կենսաբանական պաշտպանության գործերը: Չափումներն իրականացվում են յուրաքանչյուր 45-30 րոպեն մեկ անգամ պարբերությամբ: ՀՀ ԱԻՆ ՀՓԾ խմբերն աշխատում են հերթափոխային կարգով՝ օգտագործելով միևնույն սարքերի հնգական լրակազմերը: Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի խումբն իրականացնում է ստուգիչ-հսկողական չափումներ.

2) ՇՊՄՊ գոտու բնակավայրերում և ճանապարհների վրա՝ ՀՀ ԱԻՆ ՀՓԾ ռադիացիոն մոնիթորինգի և արձագանքման խմբերը (5 հիմնական խումբ, յուրաքանչյուրում՝ 3 մարդ, և 10 պահեստային խումբ, յուրաքանչյուրում՝ 3 մարդ), Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի ռադիացիոն մոնիթորինգի խումբը (1 խումբ՝ 3 մարդ) ու Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության ռադիացիոն, քիմիական, կենսաբանական պաշտպանության գործերը: Չափումներն իրականացվում են յուրաքանչյուր 15-30 րոպեն մեկ անգամ պարբերությամբ: ՀՀ ԱԻՆ ՀՓԾ խմբերն աշխատում են հերթափոխային կարգով՝ օգտագործելով միևնույն սարքերի հնգական լրակազմերը: Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի խումբն իրականացնում է ստուգիչ-հսկողական չափումներ.

2.1) ՆՊՄԻ-ի և ՇՊՄՊ-ի գոտիների մոնիթորինգի երթուղիները որոշվում են ելնելով ստեղծված իրավիճակից:

**(94-րդ կետը փոփ. 21.08.08 N 1042-Ն, 08.01.09 N 34-Ն, լրաց. 22.07.10 N 926-Ն)**

95. Շրջակա միջավայրի օբյեկտների արտաքին աղտոտվածության չափումներն իրականացնում են՝

1) ՆՊՄՊ գոտու բնակավայրերում և ճանապարհների վրա՝ ՀՀ ԱԻՆ ՀՓԾ ռադիացիոն մոնիթորինգի և արձագանքման խմբերը (5 հիմնական խումբ, յուրաքանչյուրում՝ 3 մարդ, և 10 պահեստային խումբ, յուրաքանչյուրում՝ 3 մարդ), Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի ռադիացիոն մոնիթորինգի խումբը (1 խումբ՝ 3 մարդ) ու Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության ռադիացիոն, քիմիական, կենսաբանական պաշտպանության գործերը: ՀՀ ԱԻՆ ՀՓԾ խմբերն աշխատում են հերթափոխային կարգով՝ օգտագործելով միևնույն սարքերի հնգական

լրակազմերը: Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի խումբն իրականացնում է ստուգիչ- հսկողական չափումներ:

2) ՇՊՄՊ գոտու բնակավայրերում և ճանապարհների վրա՝ ՀՀ ԱԻՆ ՀՓԾ ռադիացիոն մոնիթորինգի և արձագանքման խմբերը (5 հիմնական խումբ, յուրաքանչյուրում՝ 3 մարդ, և 10 պահեստային խումբ, յուրաքանչյուրում՝ 3 մարդ), Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի վարչության ռադիացիոն մոնիթորինգի խումբը (1 խումբ՝ 3 մարդ) ու Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության ռադիացիոն, քիմիական, կենսաբանական պաշտպանության գորքերը: ՀՀ ԱԻՆ ՀՓԾ խմբերն աշխատում են հերթափոխային կարգով՝ օգտագործելով միևնույն սարքերի հնգական լրակազմերը: Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի խումբն իրականացնում է ստուգիչ-հսկողական չափումներ:

**(95-րդ կետը փոփ. 21.08.08 N 1042- Ն, 08.01.09 N 34- Ն)**

96. ՀԱԷԿ-ի ընդհանուր վթարի վերջնական փուլում ճառագայթային հսկողության նպատակն է ՆՊՄԻ և ՇՊՄՊ գոտիներում՝

1) ռադիոակտիվ աղտոտման ենթարկված տարածքների և մակերեսային ռադիոակտիվ աղտոտվածության որակական և քանակական ցուցանիշների ճշտումը:

2) շրջակա միջավայրի օբյեկտների (օդ, հող, բուսականություն, ջրային ավազաններ ու գետեր) ռադիոակտիվ աղտոտվածության որակական և քանակական ցուցանիշների ճշտումը:

97. Ռադիոակտիվ աղտոտման ենթարկված տարածքների և մակերեսային ռադիոակտիվ աղտոտվածության որակական և քանակական ցուցանիշների ճշտումն իրականացվում է՝

1) ռադիոակտիվ աղտոտվածությամբ տարածքների ճշտում՝ մակերեսային աղտոտվածության չափումների միջոցով, որն իրականացնում են ՆՊՄԻ գոտում՝ ՀՀ ԱԻՆ ՀՓԾ ռադիացիոն մոնիթորինգի և արձագանքման խմբերը (5 հիմնական խումբ, յուրաքանչյուրում՝ 3 մարդ, և 10 պահեստային խումբ, յուրաքանչյուրում՝ 3 մարդ), որոնք աշխատում են հերթափոխային կարգով՝ օգտագործելով միևնույն սարքերի հնգական լրակազմերը, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության ռադիացիոն, քիմիական, կենսաբանական պաշտպանության գորքերը և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի ռադիացիոն մոնիթորինգի խումբը (1 խումբ՝ 3 մարդ), որն իրականացնում է ստուգիչ-հսկողական չափումներ:

2) ռադիոակտիվ աղտոտվածությամբ տարածքների ճշտում՝ մակերեսային աղտոտվածության չափումների միջոցով, որն իրականացնում են ՇՊՄՊ գոտում՝ ՀՀ ԱԻՆ ՀՓԾ ռադիացիոն մոնիթորինգի և արձագանքման խմբերը (5 հիմնական խումբ, յուրաքանչյուրում՝ 3 մարդ, և 10 պահեստային խումբ, յուրաքանչյուրում՝ 3 մարդ), Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի ռադիացիոն մոնիթորինգի խումբը (1 խումբ՝ 3 մարդ) ու Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության ռադիացիոն, քիմիական, կենսաբանական պաշտպանության գորքերը:

3) տեղում սպեկտրաչափական հետազոտումն իրականացնում է ՆՊՄԻ և ՇՊՄՊ գոտիներում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի սպեկտրաչափական խումբը:

4) ռադիոակտիվ աղտոտվածությամբ տարածքներից որակական անալիզի համար փորձանմուշներ վերցնում են ՆՊՄԻ և ՇՊՄՊ գոտիներում ՀՀ ԱԻՆ ՀՓԾ ռադիացիոն մոնիթորինգի և արձագանքման խմբերը (5 հիմնական խումբ, յուրաքանչյուրում՝ 3 մարդ, և 10 պահեստային խումբ, յուրաքանչյուրում՝ 3 մարդ), Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի ռադիացիոն մոնիթորինգի խումբը (1 խումբ՝ 3 մարդ) ու Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության ռադիացիոն, քիմիական, կենսաբանական պաշտպանության գործերը:

5) ռադիոակտիվ աղտոտվածությամբ տարածքներից որակական անալիզի համար վերցված փորձանմուշների լաբորատոր հետազոտումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի լաբորատորիան:

**(97-րդ կետը փոփ. 21.08.08 N 1042-Ն, 08.01.09 N 34-Ն)**

98. Շրջակա միջավայրի օբյեկտների (օդ, հող, բուսականություն, ջրային բաց ավազաններ ու գետեր, խմելու ջուր, տեղական սննդամթերք) ռադիոակտիվ աղտոտվածության որակական և քանակական ցուցանիշները որոշում են՝

1) տեղում օդի ասպիրացիոն հետազոտումն իրականացնում է ՆՊՄԻ և ՇՊՄՊ գոտիներում՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի լաբորատորիան:

2) որակական անալիզի համար հողի, բուսականության, ջրային ավազանների ու գետերի, տեղական սննդամթերքի փորձանմուշները վերցնում են ՆՊՄԻ և ՇՊՄՊ գոտիներում՝ ՀՀ ԱԻՆ ՀՓԾ ռադիացիոն մոնիթորինգի և արձագանքման խմբերը (5 հիմնական խումբ, յուրաքանչյուրում՝ 3 մարդ, և 10 պահեստային խումբ, յուրաքանչյուրում՝ 3 մարդ), Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի ռադիացիոն մոնիթորինգի խումբը (1 խումբ՝ 3 մարդ) ու Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության ռադիացիոն, քիմիական, կենսաբանական պաշտպանության գործերը:

3) որակական անալիզի համար վերցված հողի, բուսականության, ջրային ավազանների ու գետերի, տեղական սննդամթերքի փորձանմուշների լաբորատոր հետազոտումն իրականացնում են Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի և պետստանդարտի լաբորատորիաները:

**(98-րդ կետը փոփ. 21.08.08 N 1042-Ն, 08.01.09 N 34-Ն)**

99. ՀԱԷԿ-ի ընդհանուր վթարի դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացման գործում ներգրավված անձնակազմն ապահովվում է անհատական դոզաչափերով: Անձնակազմը դոզաչափերով ապահովելու համար պատասխանատու են համապատասխան կառավարման մարմինների ու կազմակերպությունների ղեկավարները:

100. ՀԱԷԿ-ի միջուկային և ճառագայթային վթարների ժամանակ ճառագայթային հսկողության տվյալները փոխանցվում են՝

1) ՀՀ ԱԻՆ ՀՓԾ ճգնաժամային կառավարման կենտրոն՝ պաշտպանական միջոցառումներում ներգրավված ուժերի գործողությունների ճշտման մասին որոշումների ընդունման նպատակով:

2) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի վթարային հակազդման կենտրոն՝ ՀԱԷԿ-ի վթարային պլանավորման գոտիներում ճառագայթային իրավիճակի գնահատման, դրա փոփոխությունների վերաբերյալ կանխատեսումների իրականացման և անհրաժեշտ պաշտպանական միջոցառումների իրականացման

վերաբերյալ խորհուրդների մշակման, վթարային միջամտության մակարդակների վերահաշվարկման, վթարային անձնակազմի ու բնակչության ճառագայթահարման գնահատման նպատակով:

**(100-րդ կետը փոփ. 21.08.08 N 1042-Ն, 08.01.09 N 34-Ն)**

101. Ճառագայթային պաշտպանությունն ընդգրկում է հետևյալ միջոցառումները՝

- 1) բնակչության և վթարի դեպքում արձագանքող կազմավորումների անձնակազմերի անհատական պաշտպանության միջոցներով ապահովում.
- 2) Ճառագայթային հետախուզության ու դոզաչափական հսկողության սարքերի հատկացում և ճառագայթահարման դոզաների հաշվում.
- 3) բնակչության ճառագայթային պաշտպանության միջոցառումների կիրառում.
- 4) բնակչության սանիտարական մշակում, հագուստի վնասազերծում, տրանսպորտային միջոցների, շինությունների ու տեղանքի ապակտիվացում և կենդանիների սանիտարական մշակում:

102. Հակազդող կազմավորումների անձնակազմն անհատական պաշտպանության միջոցներ ստանում է կազմակերպությունների պաշարներից: Պակասող ճառագայթային և քիմիական պաշտպանության ու դոզաչափական սարքերը տրվում են Հայաստանի Հանրապետության նախարարությունների և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր մարմինների պետական պահուստից:

103. ՇՊՄՊ գոտու բնակչության ճառագայթային պաշտպանության միջոցառումներն իրականացվում են մոնիթորինգի տվյալների հիման վրա:

104. Բաց տեղանքում գտնվելուց, ինչպես նաև տարահանման միջոցառումների իրականացման ընթացքում կատարվում է բնակչության մասնակի և լրիվ սանիտարական մշակում՝ օգտագործելով բաղնիքներն ու ցնցուղները:

105. Տարահանումն սկսելուց առաջ Հայաստանի Հանրապետության Արմավիրի և Արագածոտնի մարզերի կոմունալ-տեխնիկական ծառայությունները մասնակցում են տարահանման միջանկյալ հավաքակայաններում սանիտարական մշակման և տեխնիկայի ապակտիվացման կետերի ստեղծմանը և այդ կետերում իրականացվող միջոցառումներին:

**(105-րդ կետը խմբ. 22.07.10 N 926-Ն)**

106. Հատուկ անցակետերում ստեղծվում են ռադիոմետրիկ չափումների խմբեր՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության ռադիացիոն, քիմիական, կենսաբանական պաշտպանության գորքերի ուժերով:

107. Ռադիոմետրիկ չափումների խմբերն իրականացնում են հատուկ անցակետերով անցնող յուրաքանչյուր անձի, ինչպես նաև տեխնիկայի ճառագայթային մոնիթորինգ: Մոնիթորինգի տվյալները հաշվառվում և զեկուցվում են ՀՀ ԱԻՆ ՀՓԾ-ին և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեին:

**(107-րդ կետը փոփ. 21.08.08 N 1042-Ն, 08.01.09 N 34-Ն)**

108. Ապակտիվացման լիակատարությունը որոշվում է հետևյալ կարգով՝

- 1) հատուկ մշակում անցած անձանց սանթոդարանում ապակտիվացման լիակատարության որոշման ստուգումների անցկացում.
- 2) ճառագայթման դոզաչափական ստուգման արդյունքների թույլատրելի նորմաներից (2 և ավելի անգամ) գերազանցման դեպքում



ապասկտիվացման կրկնում՝ մինչև թույլատրելի նորմերը, որից հետո միայն սանթոդարանից ելքի արտոնում.

3) բոլոր աշխատանքների կատարում՝ անհատական պաշտպանության միջոցների օգտագործմամբ.

4) ապասկտիվացման լիակատարության որոշման արդյունքների մասին համապատասխան վերադասին զեկուցում.

5) աշխատանքի վերջում ապասկտիվացման լիակատարության որոշման խմբի ամբողջ անձնակազմի լիակատար սանիտարական մշակում բաղնիքում:

#### IV. ՎԹԱՐԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

109. Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման, դրանց ղեկավար կազմի, աշխատողների, քաղաքացիական պաշտպանության ուժերի անձնակազմի ու բնակչության ուսուցման գործընթացը կազմակերպվում և իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության 2003 թվականի հունվարի 30-ի «Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և բնակչության ուսուցման կարգը սահմանելու մասին» N 134-Ն որոշման:

110. ՀԱԷԿ-ի միջուկային և ճառագայթային վթարի դեպքում արձագանքող կազմակերպությունների անձնակազմի և վթարային պլանավորման գոտիներում բնակվող բնակչության ուսուցման թեմաներն են՝

1) գործողությունները վթարային պայմաններում.

2) հավանական խնդիրները վթարի ժամանակ.

3) ճառագայթային պաշտպանություն՝ անվտանգության կանոններ, վահանաձև գեղձի յոդային արգելափակում, շնչառական ուղիների պաշտպանություն, սննդամթերքի պարզագույն վերամշակում, տարահանման, պատսպարման, անհատական պաշտպանության միջոցների կիրառման միջոցառումներ, վարքի կանոններ, անձնական հիգիենա:

111. ՀԱԷԿ-ի միջուկային և ճառագայթային վթարի դեպքում արձագանքող կազմակերպությունների անձնակազմի և վթարային պլանավորման գոտիներում բնակվող բնակչության ուսուցման միջոցառումներն են՝

1) վթարի դեպքում բնակչության ազդարարման և գործողությունների կարգի մասին հուշաթերթիկների պատրաստում.

2) ճառագայթային անվտանգության ապահովման վերաբերյալ տեղական ռադիոկայաններով բնակչության համար ռադիոհաղորդումների կազմակերպում.

3) տեղական հեռուստաալիքով բնակչության համար հեռուստահաղորդումների (հեռուստազրույցների) կազմակերպում.

4) ճառագայթային անվտանգության ապահովման համար համայնքներում բնակչության ուսուցում.

5) ճառագայթային անվտանգության ապահովման համար անցկացվող ուսումնավարժությունների կազմակերպման և անցկացման վերաբերյալ բնակչության ուսուցում:

(Հավելվածը խմբ. 17.01.08 N 194- Ն)

[Հավելված N 2](#)  
[ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 22-ի N 2328-Ն որոշման](#)

